

**2020 թ.**  
**Հարցաշար**  
**հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի**  
**Տևողությունը՝ 150 րոպե**  
**11-րդ դասարան**

Անտառում անսովոր եռուզեռ էր: Մանվածապատ բամբասանքի գլխապտույտ հորձանքն ընդգրկել էր ամենքին: Զագրախոս կաղամախիները թափահարում էին լայնատերև ընձյուղները՝ տարածելով արտակարգ լուրը: Թխկիներն ու լորիները խարանոդ հայացքով նայում էին վերևում միայնակ կանգնած ծառին: Վրդովված էին անգամ ծառերի ստվերներում ճապաղած վեհերոտ թփերը, իսկ ձեքձեքուն բաղեղներին այդ ամենն անհեթեթ բարբաջանք էր թվում:

Անտառացունց մի դեպք անակնկալի էր բերել գորշ աշխարհի բնակիչներին, որոնք ուտում էին, փթթում, փտում՝ չձգտելով ոչնչի: Գեղուղեշ մի ծառ, ճեղքելով գուղձերն ու ազատվելով անտառային բավիղներից, սլանում էր վեր՝ դեպի հպարտ լեռներն ու արծաթավարս ամպերը՝ քրքջալով ներքևում՝ քստմնելի ժահրի մեջ խարխափող ընկերների վրա: Ծեր կաղնին, գլուխը կարկառած, աղաղակում էր.

– Իջի՛ր, ծործորներում սառնորակ աղբյուրներ կան, սննդարար ճահիճ: Անոթի ու պապակ կմնաս, կընկնես շանթահար:

Չնայած կաղնու հորդորներին՝ ծառը կանգ չառավ:

Մի մրրկահույզ օր ....., բայց .... :

1. Շարունակելով անավարտ մտքերը՝ 2-3 նախադասությամբ մեկնաբանի՛ր առակի իմաստն ըստ քո գրած վերջաբանի: (2 միավոր)
2. Բնութագրի՛ր ծառին հինգ մակդրային որոշիչներով: (1 միավոր)
3. Գրի՛ր **մանվածապատ, խարանել, ճապաղել, վեհերոտ, ձեքձեքուն, բաղեղ, բարբաջանք, գուղձ, քստմնելի, ծործոր** բառերի հոմանիշները կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Կազմի՛ր նախադասություններ **դարման, գնդան** համանուն գույգերով: (2 միավոր)
5. Գրի՛ր **խարխափել** բառի առնվազն չորս բազմիմաստությունները: (1 միավոր)
6. Վերածի՛ր աշխարհաբարի և մեկնաբանի՛ր. «**Ինքն ոչ մտանէ եւ որոց մտանենն արգելու**» (2 միավոր)
7. Բացատրի՛ր «իններորդ ալիք», «սիրամարգի փետուրներով ագռավ» թևավոր խոսքերը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունները: (2 միավոր)
8. Մեկնաբանի՛ր տրված դարձվածքների իմաստները. **ուղտի պարը կամրջին բռնել, կրակե շապիկ հագցնել, բաքոսին ուխտ գնալ, գույները թանձրացնել**: (1 միավոր)
9. Տրված եռյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր բարդ ածանցավոր բառեր. *մուրացիկ- գերազանց - վաղնջական, հակոտնյա - երկականնի - եռամսյակ, խրախճանք-փայտահատ-հարգարժան, պարտադրանք-ծպտյալ-անմեղսունակ*: (2 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Անկեղծ խոստովանություն» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)